ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2024 թվական թիվ 321-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 9_ՐԴ ՄՐՑՈՒՅԹԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐԻԱՄ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրի վարչական ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2024 թվականի բյուջեի 10-րդ բաժնի 07 խմբի 01 դասի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրի «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից 4727 հոդվածով հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել՝

1. 2024 թվականի Օլիմպիական խաղերի մասնակից, բռնցքամարտիկ, Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի բնակիչ Դավիթ Արիստակեսի Չալոյանին 100000 (մեկ հարյուր հազար) դրամ, մարզիչ Կարեն Ռոբերտի Ղազարյանին՝ 50000 (հիսուն հազար) դրամ:

2. 2024 թվականի հունահռոմեական ըմբշամարտի մեծահասակների Եվրոպայի բրոնզե մեդալակիր, Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ՝ Մանվել Էդգարի Խաչատրյանին 100000 (մեկ հարյուր հազար) դրամ, Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ, մարզիչ Էդգար Մանվելի Խաչատրյանին՝ 50000 (հիսուն հազար) դրամ :

3. 2024 թվականի ազատ ոճի ըմբշամարտի բանակայիների Աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի բնակիչ՝ Մուշեղ Միշայի Մկրտչյանին 80000 (ութսուն հազար) դրամ, մարզիչ, Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի բնակիչ Կարապետ Միշայի Ենգոյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ:

4. 2024 թվականի բռնցքամարտի երիտասարդների Եվրոպայի առաջնության արծաթե մեդելակիր, Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայրի բնակիչ՝ Միսակ Գևորգի Տեփանյանին 80000 (ութսուն հազար) դրամ, Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ, մարզիչ Արման Գևորգի Հովհիկյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ:

5. 2024 թվականի հունահռոմեական ըմբշամարտի պատանիների Եվրոպայի արծաթե մեդալակիր, <<Ախուրյանի համալիր մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի մարզիկ՝ Սեյրան Նիկոլայի Կիրակոսյանին 60000 (վաթսուն հազար) դրամ, մարզիչ Խոսրով Վարդանի Միքայելյանին՝ 30000 (երեսուն հազար) դրամ:

6. 2024 թվականի սամբո ըմբշամարտի պատանիների Եվրոպայի բրոնզե մեդալակիր, Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի բնակիչ՝ Լևոն Կարենի Վանոյանին 60000 (վաթսուն հազար) դրամ, մարզիչ Արտյոմ Մկրտչի Բաղդասարյանին՝ 30000 (երեսուն հազար) դրամ:

7. 2024 թվականի դեկտեմբերի 9-ին Երևան քաղաքում կայացած Գոհար Գասպարյանի անվան մեներգիչների դասական երգեցողության համահայկական 9-րդ մրցույթի դիպլոմակիր, Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրի բնակիչ Մարիամ Արշալույսի Գրիգորյանին՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -23 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վ. ԹՈՐՈՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 դեկտեմբերի 2024 թվական
գյուղ Ախուրյան